

ծարան մըն է, ֆրանսական լիսեներուն ծրագրով, ուր մեր պատանիները — մասնաւորապէս արտասահմանէն ու Տանկատանէն, — զան կան նոսնաւոր միջնակարգ կրթութիւն ստանան ու ազգային լուրջ դաստիարակութիւն, եւ կանոնաւորապէս պատրաստուին օտար համալսարաններ մտնելու. օգային ծրագիր մը չէ առ, մենէ առաջ, Լեհացիք, Իրանացիք, Հրեաները իրագործած են զայդ. մեր առաջարկն է հետեւին այդ ազգերուն օրինակին. քանի միլիոնի պէտք չկայ ասոր համար, կը բաւէ առ առաւելն երկու միլիոն. այդ դպրոցը պիտի ունենայ նաեւ մանկավարժական մասնաւոր բաժին մը, այն աշակերտներուն համար որ յատկապէս պիտի պատրաստուին ռուսացումեան, եւ զըզրոցին գլխաւոր նպատակներէն մին պիտի ըլլայ այդպէսով՝ կանոնաւոր ուսուցիչներ պատրաստել — ինչ որ եր պակսի մասնաւորապէս Տանկատան, Բրանսական քաղաքակրթութիւնն ըլլալով Հայոց մէջ տիրականը դարերէ ի վեր, անխորտակ պիտի ըլլայ այդպիսի դպրոց մը հիմնել ուրիշ երկրի մէջ. եւ անիմաստ պիտի ըլլար չօգտուիլ այն թանկագին աշակերտներէն զոր ինքնաբերաբար խոտաւանայ այդպիսի հիմնարկութեան մը համար՝ ֆրանսացի քաղաքական, գրական, կրթական լրագրական ամենաւարժութիւնները՝ Պ. Մարթիայանի ռուզլած իրենց նամակներէն մէջ զոր կը յիշէր « Գիւնմբեղ » Անահիթի վերջին թիւով հրատարակած իր յօդուածին մէջ. միւս կողմէ, քանի որ Փարիզի մէջ է որ ունիւր եկեղեցի մը, քանի որ Փարիզի մէջ է որ հաւանականաբար պիտի հաստատուի կեդրոնաւորող « Հայկական Միութեան », արամաբանական է որ « Հայկական Բողէժ »-ն ալ նոյն քաղաքին մէջ հաստատուի, կապուած այդ ընկերութեան եւ այդ եկեղեցիին, ուժեղ եւ ներգայնակ ամբողջութիւն մը կազմելով, իրար պահպանելու, իրարու վրայ հակելու ջանադիր, Ոչինչ կ'արգիլէ սակայն այդ դպրոցին ծրագրին մէջ զնեւ միայն գերմաներէն եւ անգլիերէն լեզուները, այլ եւ գերման եւ անգլիական գրութեան լուսազոյն աարբեր մոցնել հոն, աւելցնելով զանոնք ֆրանսական գրութեան լուս կողմերուն։ Գալով այն առարկութեան թէ արտասահմանի մէջ այնքան խոշոր դուստրով հիմնուած հաստատութիւն մը կրնայ որ օտարաւոր կամ կորչի, այդ խախտու է ինքնին. բայց նոյն իսկ եթէ լուրջ ալ ըլլայ, շատ լաւ կարելի է այնպէս կարգադրել որ օր մը երբ Մարջ Հայրենիքի պայմանները բարեփոխուին, այդ դպրոցը փոխադրուի մեր երկիրը։

Մինչ այս ծրագիրը ղեռ կը մնայ ծրագիր ու լրագրական վէճերու իւր շնիթ ծառայելու և ազգին բազդի մը արժանանալու համար կը սպասէ ոսկեհունչ « Եղիցի »-ին, այդ « Եղիցի »-ն ահա հնչեց նամաթրինակ ուրիշ ծրագրի մը համար։ Պօզոն Նուպար փաշա որոշեւ է միլիոն

մը նուիրել՝ Եգիպտոսի մէջ հայկական վաճառականական բարձրագոյն դպրոց մը հիմնելու համար։ Առանց սպասելու որ ինչորէն իրմէ այդպիսի գործի մը համար գումար մը յատկացնել, յղանալ ինքնին այդ գաղափարը եւ ինքնաբերաբար որոշել հարկ եղած գումարը նուիրել, ասիկա արտասովոր էր երեւոյթ մըն է մեր հարուստներու դասակարգին մէջ, զոր մեծ հանդիման կ'արժանապէսն էր, Վաճառականական բարձրագոյն դպրոց մը, Հայոց համար մեծապէս օգտակար հաստատութիւն մը կրնայ ըլլալ, ասի անվիճելի է. Հայր վաճառականական մեծ յատկութիւնն ցոյց տուած է միշտ, բայց այսօր վաճառականութիւնը « գետնի վրէժ » մը դարձած է, իսկ մեր վաճառականները ամենամեծ մասամբ հին արտոնմով կը շարունակեն գործել, զուրկ արգի գիտութեան հայթայթած լայն միջոցներէն։ Ազգից զատ այդպիսի դպրոցի մը մէջ, անուշտ ազգային կրթութիւնն ալ աշակերտներուն լրջօրէն տալու հոգ պիտի տարուի։ Տալ ազգին վաճառականներ, գիտականներ պատրաստուած, բնորոշուր զարգացումով արտաքինին ճոխացած, ազգային դաստիարակութեամբ տոգորուած, անհուն բարիք մը ընել է ազգին Արարծիւ, զարգացնել գիտակցութիւնը իր բոլոր ձեւերով՝ մը ժողովրդին մէջ՝ որ ղեռ այնքան զուրկ է անկէց, նպաստել է անոր վերականգնումին։ Պօզոն փաշայի հիմնելիք դպրոցը կարող է յառաջ բերել կարծուածէն շատ աւելի կարեւոր եւ բազմազան արդիւններ, թէպէտ ոչ-անմիջական, բայց ազգին ամենէն էական շահերուն համար մեծապէս օգտակար։

ԱՐՇԱԿ ԶՈՂԱՆԵԱՆ

ՏԻԿԻՆ ՍԻՐԱՆՈՅԵԻ ԾՈՌԵԼԱՆԵՐԸ

Մեզ կը հաղորդեն թէ Տիկին Սիրանոյ, նկատի ունենալով այն փոթորկալից կացութիւնը ուր այժմ կը գտնուի Կովկասը, ինչդեպէս է յետաձգել իր յորեկանին կատարումը։ Կրկարծուի թէ այդ յորեկանը պիտի տեղի ունենայ յառաջիկայ այնպէս։



Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.